

ԱՅՏԻ ՈՐ ԱՆՏԻՆ ԸՆԴ ԷՆԱՒՈՒՐՅ ՄՈԳԱԳԱ

ԹԵԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԱՆՑՈՎՆԵԱՆ ՀԱՐՑ

Երանօթ է բանասիրացն ազգին մագաղա-  
թեայ Հինաւորաց, և ըստ ոմանց հնագոյն,  
Հայերէն Չեռագիր Աւետարանն որ ի վանս  
անդ Անտոնեան Միաբանութեան յՕրթա-  
գիւղ կոստանդնուպոլսոյ, և ըստ որում զար-  
գիս մասնաւոր առարկայ իմն Հանդիսանայ  
այն Հեռաքրքրութեան բանասիրաց և Հնա-  
գիտաց, ոսկս ենթադրեալ Հնութեանն 1285  
ամաց<sup>1</sup>, ուստի աւելորդ իմն չհամարիմ սոսկ  
աստազօր Հակիրճ ծանօթութիւնս ինչ զայն-  
մանէ, որ սակօր մեծի Հնութեան գրաւեալ  
էր երբեմն և զմասնաւոր ուշագրութիւն ան-  
մա՛հ քերթողին և բազմաթղեւն բանասիրին  
ազգիս՝ Մեսրոբայ թագադեանին:

Աւետարանն այն էր մի ի բազմաթիւ հա-  
պառկեալ գրչագիր մտանեմիցն զորս բարե-  
պատանօր ժողովուրդք Հնոյն—Ջուղայի անին  
քնդ ինքեանս յՊապահան՝ որպէս թերափս  
պատուականս, յաւուրս մեծի տարագրու-  
թեանն առ Եւհ Աբբաս արքայի յամին 1605:

Մնաց այն թանկագին նշխար հնութեան  
ի Սուրբ Ամենափրկիչ յեկեղեցոյ՝ որ ի Թաղն  
Երեւան՝ անդ ի Նոր—Չուղա ց՛ամ 1832,  
զո՛հ զնաց այն սեղանակազատութեան, զի  
պարն Ամիրխան Յովհաննէս Ամիրխան, որ  
մեծաշարուստ և ազդեցիկ օմն էր ի Նորս  
Ջուղա, համոզէ և հաւանեցուցանէ զՏէր  
Մատթէոս քահանայն նոյն եկեղեցոյ՝ տալ  
ինքեան՝ զայն Աւետարան մեծագնի, խոս-

տանալով միամիտ քահանային գրել եզրարն  
խորոյ Աղաջ Յովսեփայն<sup>2</sup> որ էր միլիտանտէր  
որ անդ ի Մամուրանգ (ի Զափա կղզեոյ նե-  
զըմանդեան—Հոդկաց) առաքել երկերիւր (200)  
առփիս վասն յուսաանոյն Սուրբ Ամենափրկիչ  
կողոպտեալ եկեղեցւոյն: Վստահացեալ ի  
բանս և յանուտ կարծեցեալ խոստումն Պա-  
րոն Ամիրխանի, քահանայն բարձեալ զայն  
զանձ մեծապէն յեկեղեցւոյն տայ նմա զնոյն  
և ի ժամու՛ն ստանայ ի նմանէ 8 առփիս  
որպէս յուսապին:

Արգ վասն գետութեան իրէք, զորմէ չեն  
ինձ կամք ծանրանալ աստանօր, Պարոն Ա-  
միրխան Յովհաննէս Ամիրխան Հեռացեալ ի  
Հայքենի եկեղեցւոյն, քարի յեկեղեցին Հայ-  
Հոովճեականաց որ ի Ջուղա, և ցիեանէ մնայ  
հնազանդ գահուն Հոովճայ, որպէս կան և  
մեան ցայսօր ոմոնք ի զաւակաց և թոռաց  
նորին իսկ:

Ի գալ Հայք վրթանիտի վ. Երեզն քճեան՝  
Անտոնեան վարդապետին ի Նոր—Ջուղա,  
յամին 1843, յրթմացս իւրոյ ուսումական  
ուղեւորութեան ի Պարսկաստան, որչա և  
րեւելի շինուածոցն գրէր զնկարագրութիւնս,  
և ծանօթացեալ ընդ Պարոն Ամիրխանի  
ստանայ ի նմանէ զՀինաւորաց զԱւետարանն  
զայն, զոր նստիքաց Պարոն Ամիրխան՝  
Անտոնեանն Միաբանութեան, յաւուր 25  
Թանուարի, 1844 յամիս:

Հայր վրթանէս յիշատակեալ է զիշխա-  
նական նուիրատուութիւնն զայն յերում  
« Եկարագրութիւն Պարսկաստանի երեւելի  
շինուածոց » երկատիրութեան, պերկով զհա-  
կիրճ ծանօթութիւնս զայս. « Պարոն Ամիր-  
« խան Յովհաննէս Ամիրան, 1844 Թուճուար  
« 25ին բնծայեց մեզ, մեծաւ պատուով Հոովճ

1. Յիշատակարան Աւետարանին տայ զհե-  
տագայ թուականս — « Ես Սարգիս անարժան  
« քահանայ, զրեցի զՍուրբ Աւետարանն ՆՓԵ  
« Թուականին թագաւորեալոյ ի վերայ մեր Տեառն  
« մերոյ Յիսուսի Քրիստոսի: Նմա վայելէ փառք  
« յաւերանեմ, ամէն ր: »

Բանասէր օմն յաւելեալ զայդ ՆՓԵ (315)  
Թուականն ի փրկչականն 301 թուական, (յա-  
րում ամբ նչ Ս. Քրիզոստ. Լուսաւորբի ի Խոր

վերագէս որով և սկիզբն « Եղեւ Թագաւորեալոյ  
ի վերայ մեր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոս-  
սի ») զտանէ առ զԹուական գրութեանն, որ  
է՛ 716, այսպէս՝ 501 + 315 = 716 թիւ փրկչա-  
կան:

2. Աղայ Յովսէփ Յովհաննէս Ամիրխան էր  
մի ի մեծափարթամ վաճառականացս Ջափայի  
և կուտակեալ էր միլիոնաւոր հարստութիւն  
մեծազաւակութեամբ ակիռնի:

« Ս. Լուսաւորչայ վանքերնն պահուած է, « որուն տեսութեան ցանկանալով անպակաս « այցելութեան կու գան հնազետ մեծամեծ « և պատուաւոր անձինք » : Որպէս յայտ է բանասիրաց, մնաց Աւետարանն այն ի տիե- « փերահոչակն ի Հոռով ց'ամն 1870, յորժամ Անտոնիանն Հարք փոխադրեցին զվանս իւ- « րեանց ի Մեծն Պոլիս :

Չուղայեցիք չկարացին ստիպյն իմանալ թէ « անձ մնաց կամ ուր գնաց Աւետարանն այն, « զի հանգուցեալ Յարութիւն թ. Տէր Յովհաննանց, « պատմիչն Նոր-Չուղայի, գրէ զաջմանն օրինակ զայս :

« Չայն Աւետարան Պարոն Ամիրխանն ա- « սաքէ ի սուրբ Ղազարու վանքն Մխիթա- « րեան Միաբանութեան • Յետ առաքման « այնր՝ կրկին տեղեկութիւն պատմի, մի՛ թէ « ծովասոյղ եղև, և միւս թէ ժամանեցաւ « այն ի վանքն այն : Բազում այնորինակ « հնութիւնք կորան ի Չուղայոյ » :

Բարեկիշտոակ ըրթնոյն թաղապեան, որ էր և հմուտ հնագէտ և հնախոյճ, տեսեալ էր զայն Աւետարանն ի Նոր-Չուղա ի ասն անդ Պարոն Ամիրխանի, և գիտէր ըսշիկ զյորդ նորին և զարժէս, ուստի յամին 1889, յորժամ զասնէլնն ի կ. Պոլիս, գրէր նամակ բազմապատում ի Հ Ապրիլին առ հանպու- « ցեալ հայր իմ՝ Յակոբք Ալէթեան, աներոր- « քին իւր և աշակերան իսկ որ ի Նոր-Չուղա պատուիրելով նմա ի միջի այլոց ջանալ և ի հետ բերել զԱւետարանն զայն վասն իւր : Ունիմ՝ առտ առ իս, ինչ- « այլոց և զայդ յաւէտ հետաքրքրական նամակ հօրաքննաուն իմոյ և Մեծնորին Մեսրոպայ թաղապեան- « նի, գրեալ յաշխարհիկ բարբառ Նոր-Չուղա- « յեցոց, յորժամ յիտ գրելոյ զայլ և այլ իրաց, յաւելու և զայս, զոր յիսկականէն « զազափարեմ աստանոր, « Պարոն Ամիրխա-

« նեց տան մին մեծ գրչագիր Աւետարան « կայ, որ ութ<sup>1</sup> սէր ձիթով են տուել, իթէ « կտրմնատս նոյնը ձեռք գձել, մինչև քսան « կամ բունահհինթ թումանով էլ, առ, և « շուտով ուղարկիր թարթիկ, ուր միտարՄէ. « րիք ինչիկ կայ տեղն, նա ինձ հասցնի, « և ես քեզ փոխարէնն ինչ ապրանք կուղես, « տեղիցս կուղարկեմ : Հոյհոյբաթ զանց չա- « նիս : կամ էլ ուրիշ մտպագաթի վերաց « հին երկաթագիր գիրք տեսնես էժան գնով « ան շնս փնտսիր, ես տեղս քեզ համար « լաւ գնով կժախեմ » : Պատմէր աղիզարդ հայր թմ (1820-1899) թէ յորժամ ստա- « ցաւ զգրութիւն քեռան իւրոյ և բազմերախա « վարպապետին, գնաց ի սուն Պարոն Ամիր- « խանի որ ի թաղն Դարբիեցեաց, ի ինչպիս Աւետարանին : Իմանցեալ Պարոն Ամիրխանի « զնպատակ այցելութեան հօրն իմոյ առ ց'նա « քաղցրութեամբ, « Գնա՛ ուրիք, նախ ըրեա՛ւ, « օհա զհայրնական հոյակապ զատնս իւր և զայդի, « և զամենայն զկահ և զկարասիսն « զոր ունիս, և ժողովեալ զարժէս նոցին, եկ « սպա առ իս գնել զԱւետարանն զոր է կ. Պոլ- « ոյ (Ստամբուլոյ) ինորէ քեռայր քոյ Մես- « րոյք ժարժապետ » : Յայմանէ ի յայտ զայ « թէ Ամիրխան ի մեծի յարգանս ունէր զայն « Աւետարան, և գիտէր զարժէս նորին իսկ, « մինչ հաւասար գնել զգին այնր՝ արժէց « այլոյ, տանց, կահուց և ճորի կարասեաց « հօրն իմոյ : Մակայն ես ի ձեռաց զայնպիսի « իմն գանձ անպին, և ըսա իս զատ լաւ արար « զուրելով զայն գնահարող և արժանաւոր « անձանց, զի դուք յիտ մահու նորին ան- « կեալ այն ի ձեռս անոպայից և անարժանից « ի կորուստ անպիւս մասնէր, կամ բազմա- « կից լինէր բազմութիւն : ձեռայիր մատնիցն « բարեկիշտակ Աղայ Գալուստի Շիրմազա- « նեան<sup>2</sup> որ ի Տփիսիս յամին 1865 :

1. Ըստ գրուած վկայութեան Տէր Միմեօնի, որդւոյ Տէր Մատթէոս քահանային Սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյն : Գրուէ է վեր անդր Էջեւ յիշատակութիւն, Պարոն Ամիրխանն առ տեղեկապետ 8 զասնիս քահանային այնմիկ որպէս ընտապին, որով թուի բարեխիղճ քահա-

նայն զնեալ իցէ 8 կշիս 4 ձէթ, ի պետս եկեղեցւոյն : ակն ունեւով անշուշտ մեծի ի իշխանական լուսադնայն ի Սմարանգաւ : Մ. Էջեւն ասկայն :

2. Գրագետ, պատմաբան և քահանայ Վեհապետական այդ ընկերաց իւրոյ քեզերմանն է

Չարմանալի զուգադիպութիւն իմն արդա-  
րն, զի անմահն թաղիադեան որ երբեմն  
ի Կ. Պոլսոյ ինդրերն զայն Աւետարան փոքր  
զմտաւ ամէր յայնժամ թէ հասկ ուրեմն  
յոթնարորուրն կուտանդիանոսի գնայր բազ-  
մարիածեան Աւետարանն այն՝ որ անցեալ  
էր ընդ հուր (Շահ Աբբասայ) և ընդ ջուր  
(Երասոխայ) և անվտանգ հանեալ ի նաւա-  
հանպիտան խաղաղութեան, ի ցանկանլի  
ծննդավայրն իմ ի ՆՈՐ ԶՈՒՂԱ:

ՄԾՐՈՂՔՐ Ե. ՄԵԹԵԱՆՅ

Նոր-Ջուղա՝ յամին 1855, գնէ բազմաթիւ զՔՐ-  
լադիբ գրեանս, ըստ մեծի մասին Աւետարանոս,  
որպէս պատմէրն ինչ հանգուցեալ հայր իմ որ  
ի մտայ ճանաչէրն զնա, զի Շիրմազանեան լեալ  
էր մտերմ՝ բարեկամ՝ թաղիադեանի, անդ ի  
Գուրեթ (1854-1858) զարմէ տես ի «կենսա-  
դրութեան Մետրոլըայ Գաւթեան թաղիադեանց  
երեւանացոյ ք հաւաքեալ և խմբագրեալ ի Տէր  
Յովհաննէս Հսկկաբան Աւագ Քահանայէն  
Մկրեան որ ի Բեքոս Կ. Պոլսոյ (1884):

Ջանհարթն կորստենէ իւրոյ յաւուս և ոսկ մա-  
տենադարանին ի Տփլիս, Շիրմազանեան ի Յա-  
ռաւաքանի անդ իւրոյ հմտայից «երեւելի Հայ-  
«կազմը ի Պարսկաստան» երկատրութեանն  
զբէ այտպեւեւ Այն ինչ ձեռնամուխ իրաց կոր-  
«գի բերել ժողոված նիւթերն, և ասն 1863  
«ամի Յունիսի ամսոյ 28-29 օրը կէսօրին, մէկ  
«անակունելի արկածիք իմ հարուստ զրչա-  
«գիր և տպեալ զըջատուն և երեսունամեայ  
«աշխատութիւնս և օրագրութիւններ ի բաց ի  
«քանի մի անտրակներեց և յշտատկարաննե-  
«րեց, զից եղան ոմանց անբարեմիտ մարդկանց  
«անզուսպ կրեց»:



### Հ Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Լինման և Պեղք հնարայինները վիսպո-  
րակների մէջ պերտմենքեկ գտնուած հնա-  
րեանց ասորի հրատարակած են կոր տեղե-  
կացիներ, որոնց բարգմանորիսը «Բազ-  
մալկայ» ի 10րդ պրակով կը սկսինք:

### ԱՐԻՒՆԻՅԻ ՆԿԱՐՉԻ ՀԻԱՍՏՈՒԹԻՒՅԻՆԸ

ՍՊԱՐՈՒՅԻ ՄԵՅԻԿ Հարիբը շատ եսանդով  
շարժում էր վրձինը իւր առաջ կտրուած  
պատաստի վերայ և կենդանացնում հարիբ  
տարի առաջ սպանուած շահ իսմայիլին:  
Նկարչին եսանդ և ոգեւորութիւն էր ներ-  
շնչուած ոչ թէ միայն այն գաղափարով, որ  
ստղանդը և երեսկայութիւնը պատկերու-  
նում, կենդանանում է այլ առաւելագոյն այն,  
որ շուտով բաւականին դրամ կստանայ և  
գտնէ մի քանի օր եւս կը թիթեացնէ իւր  
բազմանդամ բնասնիքի թշուառութիւնը:

Տարին շատ սակաւաբեր էր, թանդ՝ կեն-  
սական ամենուն անհրաժեշտ նիւթերը և ի  
լրումն թշուառութեան, աշխատանքը լաւ չէր  
վարձատրուում: Մթերքների թանգութիւնը ոչ  
միայն բնական էր, այլ և արհեստական:  
Պարսկաստանում կայրածառէրերը շահեա-  
րանել էին մեծաքանակ ցորեն, յոյս ունենա-  
լով աւելի բարձր գնահատութեան, չէին վա-  
ճառում:

Առջէն չորրորդ օրն էր, որ նկարիչը սկսել  
էր իւր գործը. հաստատ հատուացած լի-  
նելով, օր նկարի պատուիրողը պիտի լաւ  
վարձատրի իրեն, մի փոքրիկ զամբար էլ  
պարտք էր տուել, որ համ մի քիչ լաւ տնւնչ  
ստանայ, համ էլ ուսուլու հողից ազատ  
ամբողջովին նուիրուի իւր սիրած գործին:

Յարգ-ալի իսանը նկարը պատուիրելուց՝  
ապահովացրեց լաւ վարձատրութիւնը և խըն-  
դրեց նկարչին ոչ մի ձեկ ու շանք չինայիչ  
պատկերը իսկատիպ անելու համար:

Աշխատանքը տեւեց 10 օր: Գիշերներն  
անգամ խեղճը մտածում ու հսկում էր, որ  
պատկերը, որքան կարելի է, լաւ լինի:  
Տասներորդ օրն էր. նկարիչը վար գրաւ  
վրձինը և հրճուալի հայեացքով դիտում էր  
իւր սքնութեանց և աշխատանքի արդիւնքը.  
նորա հիացմունքը շափ չուէր: Շահ իսմայի-  
լը նստած է ստղափաղաքող գահի վերայ: